Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7523
7524
7525
7526
7527
7528

91(56)
G-16

50

Printed in Turkey

281.6

ԿՐԿԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ս.ՂԷՏԱԼԻ Ս.ՆՑԻՑ ԵՒ Ս.ՆԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ ՏԱՆՆ Ս.ՂԹԱՄԱՐԱՑ

ԳՐԵԱԼ ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Տ. ՍԱՐԳՍԵԱՆ
ՎԱՆԵՑԻՈՑ

ԵՒ

ՈՒՂՂԵԱԼ ԱՌ Ս.ԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆ

Կ. ՊՕԼԻՍ ՂԱԼԱԹԻԱ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻՔԱՅԷԼԻ ԷՔՍԷՐՃԵԱՆ

1874

13262

54
40

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՂԵՏԱԼԻ ԱՆՑԻՑ ԵՒ ԱՆԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՑ

Խաչատուր Եպիսկոպոս, որ և անվաւեր կա-
թուղիկոս Սղթամարայ՝ որոյ վարուց և քարոզ-
նկարագրեր ամենաքեռ ծածկագրեին յայտնի
լինելով, միայն ժողովրդ չդայթակղեցուցա-
նելոյ համար պէտք չէ հրատարակել աղդայնոց
առաջ, թէև ինքն անխղճօրէն իւր հօր, թե-
րեւս քնաւ չդարձած յանցանքներ առաջի աղ-
դայնոց և օտարազգաց հրապարակ հանելու յան-
դգնեցաւ ի գայթակղութիւն ազարդամտաց։

Դա որ այժմ իբրև կաթողիկոս կը նստի
Պատրիարքարանի մէջ, և շարունակ կը բողոքէ
ժողովրդեան հարստահարողաց դէմ, երբեմն
ինքն օտարազգի հարստահարիչ ներէն աւելի
կը բռնանար ժողովրդեան վրայ. և ծայրայեղ
անդթութեամբ կը կեղեքէր զդիւղացիս, ի կեն-
դանութեան նահատակեալ Պետրոս Պիւլպիւլ
կաթուղիկոսի։ Դա ինքն 7-8 տարի Ռշտունեաց

Հայոց Զորոյ դիւղերու մէջ վարձակալութիւն ընելով, անյաղ տպրուկի պէս ժողովրդեան ալիւն կը ծծէր և ադահելով կը հարստանար օր ըստ օրէ։ Ս. յս մասին խեղճ նահատակեալ Պետրոս կաթուղիկոս բազում անգամ առանձինն և հրապարակաւ կը համոզէր զինքն և կը յանդիմանէր. Թէ ես զքեզ եպիսկոպոս ձեռնադրեցի, դ-ընդէմ չը ձեռնադրեցի. բաւական է ալ որ դու Քրիստոսէն աւելի իմ խեղճ ժողովուրդ կեղեքես. տակայն նա Վանայ դրամատէր վարձակալ իշխաններ իւր բաժանորդ և պաշտպան ունենալով, բնաւ չէր անսար իւր կաթուղիկոսի հայրագութ խրատուց. ուստի խեղճ վա՛յ տալով իւր անձին, կը գոչէր առ երեսս Խաչատուրին թէ զդչայցեր եմ իմ ձեռքս քու գլխուդ վրայ դնելու։ Խեղճ նահատակեալն իբր հայրական պարզութեամբ իբրև Յովհաննէս կը խրատէ այս նոր Հերովդէս. չէր գիտեր թէ նա իբրև Հերովդիադա պիսացեալ նորա գլուխ և աթոռ կը խնդրէր։

Տակաւին մէկ չի հարցնէր թէ Ս. Լուսաւորչէն սկսեալ մինչև ցայսօր ո՞ր վարդապետ ո՞ի եպիսկոպոս թող տալով իւր բուն կոչումն՝ վարձակալութեան պարապած է, նախանձայոյզք Հրեայք՝ մաքսաւորներ մեղաւոր կը համարէին. իսկ Յիսուս Քրիստոս շնորհական օրինաց նախանձայոյզն՝ չուանեայ խարազանաւ զդնողս վա-

ճառողս Աստուծոյ տաճարէն արտաքս կը մերժէր։

Սակայն մեք Աստուծոյ տաճարի մէջ առաջին բարձրագոյն աթոռի վրայ բազմեցնել կը նկրտիմք։

Մէկ չկայ ազգի մէջ որ հարցնէր, թէ այդ եկեղեցական որ իւր վարձակալութեան օրերը գիւղեր ուրհանդակի պէս կը շրջագայէր, արդեօք օր մի վերզարով փիլոնով եկեղեցի մտած, քարոզ և խրատ խօսա՞ծ է ժողովրդին. օր մի գիւղերու մէջ դպրոց հաստատելոյ խորհուրդ յղացե՞ր է. օր մի ժողովրդեան նիւթական և բարոյական կեանքն ապահովուելոյ փոյթ և եռանդ ունեցե՞ր է. եթէ նոյն թեմի ժողովրդեան հարցնենք, ո՛չ պիտի պատասխանէ, եթէ իւր սրտի մէջ երկիւղի կասկած չ'ունենայ։

Սակայն Խաչատուր եպիսկոպոս ըստ ասելոյն Մովսէսի, դիրացաւ, ստուարացաւ, լայնացաւ հարստութեամբ, եթող զխիղճն, մոռացաւ զՏէր Աստուած, և անդուշեաց զսիրելին իւր զՊիւլպիւլ կաթողիկոսն, և իբրև անդրանիկն Ռուբէն եւ յանկողին հօր իւրոյ Յակոբայ։

Յոյժ հարկաւոր էր աստանօր Խաչատուրի նենգութեան խորհուրդներն, Պիւլպիւլ կաթողիկոսի սպանութեան պարագաները մանրապատում առնել, և զոր լուաք յունկանէ, քարոզել

ի վերայ առնեաց, սակայն թէ Նարեկայ վանուց վանահայրը Ս.Յժ. Յովսէփ վարդապետ և թէ այլք փոքր ի շատէ արդէն զրած են, աղղային վարչութեան հաղորդած են. եթէ ասանք ի մարդկանէ զխաչատուր եպիսկոպոս արդարացուցանեն առաջի մարդկան, ինչպէս արդարացուցին Կարնոյ Յարութիւն արքեպիսկոպոս և Վասպուրականի հանդուցեալ Ս.առաջնորդն Իդ-ծատիոս եպիսկոպոս, սակայն Ս.ստուած դիտէ զխորհուրդս զգործս և զապիրատութիւն Խաչատուրին. թող դա երդմամբ և վկայութիւք հաստատէ թէ բնաւ իւր հօր Պիւլպիւլ կաթուղիկոսի սպանութեան ոչ խորհրդակից և ոչ կամակից է եղեր. թող համարձակի Ս.ստուած և հրեշտակներ երկինքէն վկայ կոչել և ասել թէ Տէվրիշ անուն քիւրտ իւր սպասաւոր չէ, որ Տէվրիշ պէյի որդի Ղուլի խանի հետ սպանութեան ոճիր գործելոյն ներկայ և գործակից չէ եղեր. եթէ այս դժպատահ դէպք տեսնող մարդիկ մի առուր մէջ մեռնէին, թերևս հնար լինէր ուրանալ այսպէս յայտնի ճշմարտութիւն առաջի Ս.ստուծոյ և մարդկան։ Սակայն դեռ բազմաթիւ մարդիկ կենդանի են և կը վկայեն։

Դահ մի ընդունինք թէ Խաչատուրի սրտէն և մտքէն չէ անցած այդպիսի հայրասպանութեան խորհուրդ և բոլորով սրտիւ հաւատամք

նորա այս մասին անմեղութեան, սակայն բոլոր ժողովուրդ Սղթաճարայ աբք և կանայք միաբերաբար կը վկայեն այսպէս թէ՝ եթէ Խաչատուր եպիսկոպոս կաթուղիկոս չը ձեռնադրուէր, բնաւ ոչ ոք չէր համարձակէր Պետրոս կաթուղիկոսին մերձենալ ու ապանանել. թէ ամիսներով առանձին միայնակ լերանց գլուխ, ձորոյ խորերու մէջ կը շրջագայէր։ Սոյս վկայութիւն ոչ միայն Խաչատուրի թշնամիք, այլ առաւել նորա սիրելիք և բարեկամք հրապարակաւ կը խոստովանին. և այսչվկայութիւն քան զամենայն վկայութիւնս ճշմարիտ է և անկեղծ. քանզի ամենայն բռնաւորք աշխարհին կը պատկառէին և կը սարսէին Պետրոս կաթուղիկոսէն. բայց տեսան թէ նա իւր հարազատ և ձեռնասուն անարժան որդիներէն մերժուեցաւ, ամենուէն դահավէժ եղաւ, որք իրրև անդութ թշնամի իւրեանց հօր կարուսան և մահ կը խնդրեն։ Եթէ կամակից և խորհրդակից չը լինէին, անտարակոյս երկար ժիջոց չ'ապրի կենդանի մեծար խեղճ նահատակեալն. զի երբ տեսին թշնամիք թէ անարգրոյն ընտանիք ի խաչ հան զգա կ'ազատակեն, այլ և տարակոյս չկար թէ կորուստեան պահանջներ համարձակ ձեռք նորա արեան մէջ պիտի շաղախէին։

Խաչատուր և Յակոբ եպիսկոպոսներ կեղ-

ժեալ պատճառանօք շարունակ բողոքեցին Եա-
ռախու Սոկոց հարստահարիչ Քրդաց դէմ. բո-
ղոքեցին Եէյի Ճէլալէտտին դէմ. բողոքեցին
Նէթօյի և այլ մարդիկ սպանողաց դէմ, թէ-
Վանայ բդեշխին առեան և թէ Բ. Դրան առ-
եանները. բայց այս եօթն տարուան միջոցին
երբէք չբողոքեցին Տէվրիշ պէյի որդի Ղաւլ
խանի և իւրեանց սպասաւոր տէվրիշի դէմ, ոչ
Վանայ բդեշխի առեան և ոչ Բ. Դրան, թէ
նոքա ղմեր հայր ի զուր սպաննեցին. զի եթէ
բողոքէին և ՀՂաւլի խան իբրև մահապարտ ի
բանտ դատապարտէին, անշուշտ առ յայտնի հա-
մարձակ պիտի յայտնէր յառենի կառավարու-
թեան թէ՝ տոցա թելադրութեամբ և խորհրդով
սպաննեցի ՀՊիւլպիւլն։ Ուստի երբէք տէր չը
կանդնեցան իւրեանց հօր և աղգի մէկ նահա-
տակեալ կաթուղիկոսի մը։ երբէք նորա արեան
վրէժ չպահանջեցին, այլ ընդհակառակն սերտ
մտերմութիւն և բարեկամութիւն պահեցին
իւրեանց հօր սպաննող Ղաւլի խանի հետ և զայն
պատուեցին և մեծարեցին, մինչև ցայսօր ժա-
մանակի. ահա մարդիկ որ ՀՂաւլ մի յաւիշտա-
կողաց դէմ բողոք յայտնեցին, իսկ կաթողի-
կոսի մը սպաննողի դէմ խոպան լռութիւն. մի-
թէ մի ուլոյ չափ արժէք չունէր իւրեանց ՀԷռ-
նադրոյ հայր։

Պիտի կամենար կաթուղիկոս ազգային Վարչութեան որոշմամբ և կոնդակաւ, Բ. Դրան հրովարտակաւ, և թեմական ժողովրդոց ընտրութեամբ և հաճութեամբ օծեալ էր կաթուղիկոս տանն Սղթամարայ. իսկ Խաչատուր ոչ ազգային Վարչութեան հաւանութեամբ, ոչ Բ. Դրան հրամարտակաւ, և ոչ թեմական ժողովրդոց ընտրութեամբ և հաճութեամբ. Սրդ իբրև դատաճան ազգային իշխանութեան և Բ. Դրան հրովարտակին և ժողովրդական ընտրութիւն ոանհարող և այսչափ աղէտից պատճառ եղող անձ մի պիտի յաջողի՞ այս 19երորդ դարու մէջ շլացուցել ազգայնոց ամենուն աչք և միտք, և կաթուղիկոս բաղմիլ Սղթամարայ աթոռի վրայ. եթէ այս յաջողի, իրոլոր կենդանի կաթուղիկոսաց կեանք միշտ վտանգի ենթակայ պիտի լինի. զի Խաչատուրի ոգեա փառասէրներ պակաս չը լինելով կղերական դասուն մէջ, պիտի չանեն զկաթուղիկոս, զպատրիարք և զառաջնորդս եկեղեցւոյ կամ ապանանել, կամ թունաւորել, և կամ կուսակից գտնելով իրենց, յաթոռէ անտի դահավէժ առնել, ինքեանք բաղմիլ, օրինակ առնելով առաջի աչաց և առաջի ազգին զԽաչատուր եպիսկոպոս զդրծս զարարս և զյաջողութիւն նորա.

Ներկայ սահմանադրութիւն ազգային թէ

եկեղեցական և թե աշխարհական դատաց վրայ
պատրաստանում էին։ Կը դնէ « Հայաստանեայց
եկեղեցւոյ դատանութիւնն ու առանձնութիւնը
անարատ պահել։» Խաչատուր եպիսկոպոսի
դարձ՝ որոյ իւր հօր կենդանութեան ժամանակ
առանց հաճութեան և ընտրութեան հանձնուէր
ազգին Ներսէս Աղուանորդուն էր Հայաստան-
եայց եկեղեցւոյ դատանութեանց և առանձնու-
թեանց։ Զի Սղիթատարայ աթոռակալը Գաւիթ
Թունիկ ինքնընտիր կաթուղիկոսն սկսաւ ժին-
շե հերիքոյ Խաչատուր եպիսկոպոս՝ բայց ի սա-
կաւուց՝ կամ աշխարհական իշխանաց Հիւսք
կամ Գաշտուք կամ Գրիգոր բռնութեան ժի-
ջոցներով կաթուղիկոսացած են, որոց կաթու-
ղիկոսութիւն ընդ հոգեւորն է յայտնի ըստ ազգա-
յին սովորոց դատաստանաց և առանձնութեան։

Զատութիւն Հայոց Զամշեանի, հատոր Դ,
թղթահատոր 36։

«Այլ իբրև եհաս ի Վառաքուրական աշխարհ
ընդ հասիւաւոյ մահուան Գարդի Հայրապետի
և զատամեցան ամենք ընտրութիւն կաթուղիկո-
սութեան Գրիգորի Պահլաւունեաց, աթոռակա-
ցոց Սղիթատարայ Գաւիթ որդի Թունիկայ ու-
նուն պշտեալ ընդ այն յոյժ, և առիթ առեալ
զմանկական հասակն նորոյ կաթուղիկոսին, վատ-
բանեաց ի նմանէ, և յարոյց վրդովումն ի մէջ

տղին. և Ժողովեալ եպիսկոպոսունս հինգ ի Զորոյ վանս, հաւանեցուցին զնոսա և ձեռնադրեցաւ ի նոցանէ կաթուղիկոս, տալով միանդամայն և դրամս աչ սակաւ այլազգի իշխանին տեղւոյն և դրեաց անտի թուղթս յայլայլ տեղիս ընդունիլ զինքն կաթուղիկոս Հայոց, և ամենայն փութով դուն գործեաց ընծայիւք և աղաչանօք հաւանեցուցանել զազարդամիտս, եղեալ այսպիսի ինչ պատճառանս, եթէ ոստ ի Վասպուրականէ դերեզման Վահանայ կաթուղիկոսի...:

Եւ եղեւ իբրև լուաւ զայս Գրիգոր կաթուղիկոս, Ժողովեաց առ ինքն զեպիսկոպոսունս, զվարդապետս, զվանահայրս և զմիանձունս առէր քան զերկու հազար և զհինգ հարիւր անձինս և արար Ժողով մեծ ի Սեաւ լեառն, և եդ զբան առաջի հարց Ժողովոյն, և ապա ասենաբանեաց: Սկսաբան բանադրանս եդեալ, ձեռադրով մերժեցին զԴաւիթ սուտ կաթուղիկոս և նզով եդին ի վերայ ամենայնի այնոցիկ որք ի ձեռն աշխարհական բռնութեան և կամ ի ձեռն կաշառոյ յանդգնին ելանել յաստիճան կաթուղիկոսութեան, կամ եպիսկոպոսութեան և դրեցին վասն այսր երի յարեւելս առ եպիսկոպոսունս և առ իշխանս և յաւէտ առ այնոսիկ որք ընկալեալ էին զԴաւիթ, և նոքա ևս մերժեալ ընա, յարեցան ի Գրիգոր:»

Թուղթ ընդհանրական որոյ հայրապետին մերոյ Տեառն Ներսէսի Շնորհալւոյ տպագրեալ ի Պոլիս, 1825. թղթահամար 33.

«Զի՞նչ ասել և զհամօրէն այսպիսի չարեաց, զյայտնապէս հակառակացն ճշմարտութեան և որոյ աթոռոյ Լուսաւորչին, որք ինքնաշարժ ախտիւք և բռնակալաց աշխարհի հրամանօք զանձինս իւրեանց յայս սասիճան գեւոր բարձրութիւնս ձգեն, և ոչ ընտրութեամբ Սուրբոյ և սատուածայնոց արանց և համօրէն աղգիս, որպէս օրէնն պահանջէ. որով բիւր նեխութեան և ապականութեան անդամոց Քրիստոսի լինին պատճառ. . . . . .

«Եւ արդ զո՞ր արդեօք իւղ շնորհաց ունէին, որք յԱհարոնեանն դլխոց օծարացեալք են, և ընդ Դաղանայ և Սբիրոնի, որք հակառակ կային մեծին Մովսիսի և Սահարոնի՝ յօդեալք ելեն գործովք. կամ թէ զոր կամակորութեամբ մերկացան բաժանեալք և որոշեալք ի շնորհաց, զիա՞րդ կարիցեն զյինքեանց կորուսեալն այլոց ընձեռել:

«Որք յաղագս սոյն և այսր իրի յանդգնութիւն ի ժամանակի սեառն մերոյ և եղբօր Գրիգորի կաթուղիկոսի սրբոյ ի Սեաւ լեառն մեծաւ սիւնհոդոսիս սուրբ և առաքինեաց արանց աղգիս Հայոց, ժողովեալ աւելի քան

2300 անձանց եպիսկոպոսաց, վարդապետաց, հարց, վանահարց և միանձանց սրբոյ լերինն, նպովեալ հերքեցին յեկեղեցւոյն Քրիստոսի և սրով բանին Աստուծոյ հատեալ ի բաց ընկեցին որպէս զնեխեալ և զփտեալ անդամ յառաջ մարմնոյ եկեղեցւոյ։

Անէծս ցաւագինս կուտեալ ի գլուխս նոցա որոց ոչ եկեալ ի միտս և ոչ զգացեալ զմահացու ցաւս հոգւոց, առնել զդեղ կենաց ի դեղատուէ իմաստնոյ (այսինքն) մնալով ընդ ցաւագին նպովիւք և ոչ առնելով կամ ինդրելով զօրհնութիւն ի սրբոյ հայրապետաց և ըստ ժբչկել զգլմամբ և ապաշխարութեամբ ի մահահամբոյր զաւուհատէն (այսինքն) ճդել զգոզացեալ և կաշառօք ընտրեալ կաթուղիկոսն և ապաշխարել, այլ հոգւոյն իժի և քարբի խոցեալ զլսելիս, աստուածային բանին դեռ ևս յամառեալ բորբոքին ի նոյն չարութիւն։ (Յամառութիւն որ ոչ միայն տեսեաց մինչև ցՍուրբ Ներսէս Շնորհալին, այլ մինչև ներկայ Խաչատուր եպիսկոպոսն) Սրբեալ և յիմարեալ միառամոլ ախտիս իբրև զդազանս կատաղիս ոչ դադարին մուծանել զխռովութիւն յառաքաստին խաղաղութեան երկնաւոր հարանարանի միաբանեալ բանին, զոր արեամբ զնեալն աղաւոեաց ի չար մշակութեանց բանսարկուին որոց արիւն ի

գլուխ իւրեանց ճղիցի, և վրէժ չարչարանաց գործոց նոցին յանձինս իւրեանց լիցի։»

739 տարի յառաջ յամի տեառն 1114 և թուին Հայոց 247 Սեաւ լեառն Գրիգորիս Կաթուղիկոսի նախագահութեամբ ժողով կը գումարուի 2500 անձանց բանիւ և գրով յաւագին անիծքիւք և նզովիւք կը մերժեն զԴաւիթ Թոռնիկն յեկեղեցւոյ և ի կաթուղիկոսութենէ։ յետոյ Սուրբ Ներսէս Շնորհալին զնոյն նզովք և անէծս կրկին երկրորդելով կը հաստատէ ի վերայ յաջորդացն և նմանեաց նորին։

Սրբոքք այժմեան ժողովքեր կարե՞ն 2500 աղքոց, եպիսկոպոսաց, վարդապետաց, վանահարց, քահանայից և կրօնաւորաց նզովք անէծք ո՞ վճիռն բառնալ, և նոր կաթուղիկոս հաստատել Սղթամարայ մէջ. օրք միշտ աշխարհահան խշխանաց մէջոյտ կամ հաշտօք և ոմն չը գիտէր թէ յետին դարուս մէջ շատեր Գրիգոր ձեռօք և հաշտաստութեամբ բարձրացան յաթոռ։ Եթէ Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութիւնք անարատ հաւատքիւք ազատել բանիւ և արդեամբ. ահա ժամանակ հասած է մէջէն այդ անուն և նզովք բառնալու. զի շնորհիւ Օսմանեան հայրութեան, բռնութիւն խշխանաց և Տարայ բարձեալ է ի մէջոյ, և չկայ այլևս ազատառ զայն վերսին հաստատելոյ։ Սղթամարայ դա-

բաւոր յաջողութիւն՝ զոր ոմանք չոլիանալով նուիրապետութեան համարեցին, այսու յաջողութեամբ միշտ հակառակ մեր սուրբ հայրապետաց, եպիսկոպոսաց, վարդապետաց և ժողովրդեան կամաց, աշխարհական իշխանաց միջոցաւ եղաւ. և եթէ ոմանք ապաստային օգտակար կը համարին յաջողութեան շարունակութիւնը, կուզեն պարզամիտներ խաբել. զի ապաստան մէջ եթէ աղդ կաթուղիկոսի կարօտութիւն ունենայ, ուր որ կամենայ, հոն կը գնայ դնել. ինչպէս որ պատահած է։

Արդէն Աղթամարայ կաթուղիկոսութեան վերջին դանդաղին հնչած է. նախ որ տա Նչմիածնի աթոռէն 3 աւուր միջոցաւ հաղիւ թէ հեռի է. երկրորդ որ 4000 տուն հաղիւ հայ ժողովուրդ ունի Աղթամարայ տուն։ Սոյն անձուկ միջոցի մէջ երկու կաթուղիկոս, և այսչափ փոքրաթիւ ժողովրդեան առանձին կաթուղիկոս հաստատել, ազգի ոչ առանց դատապարտութեան, ոչ խմաստութեան, ոչ բուսաւորութեան և ոչ պատուոյն կը վայելէ։ Կարնոյ, Պանայ, Տարօնոյ, Խարբերդու, Սեբաստիոյ վիճակները 4000էն աւելի, մինչ 10-14 հազար ժողովուրդ կը պարունակեն. ամենուն առանձին առանձին կաթուղիկոս հաստատել պէտք կը լինի։

Յամանակաւ ի Թաւրիզ, ի Հնդի, ի Մա-

լուշ, ի Սեբաստիա, ի Բերիա աշխարհական իշ-
խանաց համահաճ ձեռնտուութեամբ կաթուղի-
կոս նստած են. բայց ո՞ւր են արդեօք այսօր
նոցա ինքնընթերը և տեղական կաթուղիկոսու-
թեան յաջորդութիւնք։ Ազգի անիշխանութեան
և խառնաշփոթութեան միջոցին, միևնոյն ժա-
մանակի մէջ 6 կաթուղիկոսք կային ազգի մէջ.
և ազգ պատակտելով իրարու դէմ յարուցեր
էին. ո՞ւր են այժմ նոցա թիւ և յաջորդու-
թիւնք. երբ ազգային մը յիշեալ ինքնընթերը և
բազմաթիւ կաթուղիկոսաց ժամանակակից պատ-
մութիւնը ընթերցու, վա՛յ և եղուկ կը կար-
դայ նոյն ժամանակի կաթուղիկոսաց, իշխանաց
և ժողովրդոց։

Ցոդ զայսոսիկ, բոլոր ազգային պատմիչք
ի մի բերան Էջմիածնայ կաթուղիկոսաց յաջոր-
դութիւնք և Սսոյ կաթուղիկոսաց յաջորդական
աթոռակալութիւնք միայն յիշելով, Ս.ղթամա-
ւոյ կաթուղիկոսաց շուք և յաջորդութիւնք ի
կարգս անհարազատից դասելով խապառ արտա-
քին կը մերժեն և անարժան կը համարին պատ-
մական յիշատակութեան։

Ի դէպ է և աստանօր յիշատակել թէ ոչ մի-
այն Գրիգոր և Ներսէս Պահլաւունի տուրբ կա-
թուղիկոսաց և ոչ միայն 2500 հարց սրբոց
անէծք և նզովք յաջորդաբար և հաւաքաբար

կը ժողովին Խաչատուր եպիսկոպոսի վերայ, այլ և Պետրոս Պիւլպիւլ կաթուղիկոսի անէծք և նզովք կը կուտուին ի գլուխ նորա. քանզի ինչպէս ականատես և ականջալուր վարդապետներէն ստուգեցինք, Պիւլպիւլ երկար և ցաւագին անէծք և նզովք կարդացեր է Խաչատուրին, որ յանդգներ է իր կենդանութեան կաթուղիկոս ձեռնադրուիլ։ Պետրոս կաթուղիկոս լսելով թէ առանց իւր կամաց և հաճութեան, Խաչատուր Վարագայ Ս. Խաչի շաբաթ օր պիտի ձեռնադրուի, փոքր նաւակ մը բերելով կաճապարէ ի Կղզին երթալ. Խաչատուր, Յակոբ, Սարգիս, և Եղիազար եպիսկոպոսունք դրսի տուն պատրաստի լինելով, նաւակ ուրիշ կողմ կը փախցուցեն։ Խեղճ Պիւլպիւլն կ'ստիպուի մի ապարէզ հեռի այդի գլուխ մեծ նաւն երթալ. կը հասնի, և հիւանդ դոլով, Մ. Ս.Բրահամ նաւավարի շալակն ելնելով նաւի սանդուխի վրայէն դէպ ի նաւ կը դրուի, որպէսզի ներս երթայ. և արդիլէ Խաչատուրի հայրապետաւ խորհուրդ. յիշեալ չորս եպիսկոպոսունք անմիջապէս եռուէն հասնելով, նաւավար Մ. Ս.Բրահամին սաստիկ հայհոյանօք կ'սպառնան և կը հրամայեն որ խեղճ կաթուղիկոս դուրս բերէ և աւազի վրայ ձգէ. նաւավար առ ահի կը դարձունէ, և աւազի վրայ կը ձգէ կիսամեռ. վասնզի կը տեսնէ որ իւրմէ

ձեռնադրեալ չորս եպիսկոպոսք ոչ միայն կարդելոն ներս երթալ, այլ կանարգեն, կանդամանեն, և բանս հայհոյանայ կը տեղան իւրեանց անկարեկից հօր վերայ, կը թալկանայ և կիսամեռ կը լինի. յիշեալ չորս անգութ կղերք թող տալով զիւրեանց ձեռնադրող հայր աւագն վրայ, ինքեանք և իւրայինք քանի անձինք նաև մոնելով ի ներքս կը փութան, և միւս օր զԽաչատուր կաթուղիկոս կ'օծեն. խեղճ երկու օր երկու գիշեր աւագն վրայ կը մնայ, որպէսզի հայելով և տեսանելով կարեկից լինին եպիսկոպոսունք, և աթոռ իր կենդանութեան չյաջողեն, բայց ի զուր։

Երկրորդ օր խեղճին սրտի կսկիծէն կ'սկսի բերնէն և քթէն գունդագունդ արիւն հոսիլ. այս միջոցին կը հայի դէպ ի երկինք և դէպ յԱղթամարայ կղզին և ցաւադին կերպիւ նզովք և անէծք կը կարդայ Խաչատուրին և նորա կապակից եպիսկոպոսաց թէ «Դու՝ որ զիս իմ կենդանութեան աթոռէս զրկեցիր, զրկեալ լինիս քո սատիճանէն և չվայելես այդ աթոռ։» Եահատակեալ կաթուղիկոսն աւ ընթեր կացեալ Փշավանից Տ. Խաչատուր և նորա ապատուորք վկայեցին այսմ բանի, որ ականջալուր էին։ Երեք շաբաթ հաղիւ վրայ կանցնի, Ղազար և Սարգիս եպիսկոպոսաց և Սեթի՝ վարդապետի

լեպունին բերանները մէջ կուռենայ, և թեզաչափ կը կախուի և կը հատի, և երբեք առուր մէջ յիշեալները անբարբառ և անշունչ ընելով դերեզման կը տանի. Խաչատուր ամիսներ կը զրկուի. Խիզանցին փոշտանկի պատիժ կընդունի, Զուսանցի Մ. Յովհաննէս և ուրիշ քանի աշխարհական մարդիկ կը մեռնին. յետ ոչ քաղաքաւ առուրց։

Գալով ի կարգ պատմութեան, կաթուղիկոս երկու օր առաջի վրայ ճեպով իւր մտերմացրուն թախանձանքէն ստիպեալ յետոյ ի Փշտվանք կերթայ, դրամի և այլ պատրաստութիւններ կը տեսնայ առաւօտն Վանայ քաղաքն երթալու և բոլոր հացնելու աղդային Վարչութեան. զիշեր Տէվրիշ պէյի տղան Կուլի խան, և Խաչատուրի տպասաւոր Տէվրիշ երկու պնտակ դնելով հրացանի մէջ կ'ապաննեն զկաթուղիկոս։

Սղթամարայ մէջի մարդիկներէն մին որոյ անուն Գրիգոր կը կոչի, պարագայ մի կը յայտնէ որ զարմանք և սարսափ կը բերէ մարդուս։ Տէվրիշ պէյ ջրոս եպիսկոպոսաց հետ ներս մտած էր, 3 օր ջարունակ ալեկոծութիւն եղաւ այն դիշեր որ կաթուղիկոսն սպաններ էին, Խաչատուր և իւր խորհրդակիցք խորհեցան ի միասին թէ նաւ խրկելոյ ենք, որ սպանեալ կաթուղիկոս Մարսին բերէ դիշերայն թաղենք, և

համբաւեն՝ թէ իւր մահուամբ մեռաւ է. 3 անգամ այս խորհրդեամբ նաւն ի ծովն հանեն, բայց սատանի աղեկոծութեան աղագաւ չկրցան նաւել. երեք օր ոչ ներսէն դուրս և ոչ դրսէն ներս նաւ, նաւակ և մարդ եկած չէր. ուստի դիտէին թէ կաթուղիկոս այն գիշեր սպաննուած է. մարդարէ՞ էին. մարգարէն չը խորհիր սպաննելոյն մարմին բերել թաղել, և համբաւել աշխարհի թէ հիւանդ էր նա և իւր մահուամբ մեռաւ. ո՞վ լսեց և տեսաւ այնչափ ժամանակի մէջ թէ բարձրաստիճան եկեղեցականի մը մարմին գիշերայն թաղուի, և մարդ չ՚տեսնայ. ահա ասա նենգութիւն խաչատուրի և իւրայնոց յայտնի կը լինի.

Նահատակ կաթուղիկոսի սպանման լուր խաչատուր լսելով, անմիջապէս նորա սենեակ կը բանայ, կը կողոպտէ դրամներ և այլ կահ կարասիք. և յետոյ դուրս նաւելով, ուրախութեամբ և կաթուղիկոսական շքով կը դիմէ ի Փշալանք, և կը հրամայէ Փշալանցոց Յակոբ վարդապետին կապել և սպաններոյն երդբորդին խաչատուր կոչելով, ողջքանոք և սպառնալեօք կը համոզէ որ Քրիստոս սպանութեան ոճիր գոցելու համար ինքն ասէ թէ իմ հօրեղբայրս ես սպաննեցի. սպաներոյն սպասաւոր որ տեսած էր ոճրագործներն, կը ճանաչէր զանոնք յանկէ

յանուանեն և որ այժմ կենդանի և Սնոզիայ Աստուածածնի վանք հոլիս է. և Խաչատուրին սպանութեան կամակից և խորհրդակից լինելն կասուզէ և կը վկայէ, ինչպէս վկայեց մեր և Յովսէփ եպիսկոպոսի ներկայութեան, զսա սատանիկ դանակոծել կուտայ Տէվրիշ ագէյի ձեռք, որ կաթուղիկոս սպանող Կուլի խանի հայրն է. կատիպէ ասել թէ կաթուղիկոսի եղբօր որդին սպաննեց. խեղճ Քիւրա կաղաղակէ թէ նա անպարտ է, սպանութեան ոճիր այլք գործեցին, բայց Խաչատուր բոլոր զօրութեամբ և խորամանկութեամբ կը ջանայ կաշխատի և կը սպառնայ որ քնաւ Կուլի խանի և իւր սպասաւոր Տէվրիշի անուն չը տան.

Մինչդեռ ինքն սպանողք կը ճանչէ յանկանէ և յանուանէ, կը ջանայ անպարտ մարդիկ իբրև ոճրագործ ցոյց տալ աշխարհի, կաթուղիկոսի եղբօր որդին հարուածոց ներքև կիսամահ ընելով նորա դրամներ կը պահանջէ, կաթուղիկոսի եղբօր կին տեսնելով թէ իւր որդին մահուանէ ազատելիք չունի, սպանելոյն բոլոր դրամներ կը դանայ կը բերէ կը յանձնէ Խաչատուրին, որոյ դումարն ըստ վկայութեան սպանելոյն մտերմաց 100,000 դրշ.ի կը հասնի, զորս խաչատանդանօք և բռնութեամբ ձեռք կը բերէ, ըստ վկայութեան Նարեկայ Յովսէփ վարդապետ

ոչ 300,000 դրշ. և Սղթամարայ կղզիի միջի սե-
նեկէն կը հանէ, և քանի վարդապետայ և իշ-
խանայ ձեռօք արկղի մէջ դնել և կնքել կու-
տայ, և քանի օրէն զկնի անառակի տակի տախ-
տակներ փրցուցնելով գրամներ դուրս կը հանէ
և մէջ բարփիձայ լեցնելով գրամներ ամբողջ
կ'իւրացնէ։

Հատ վկայութեան հաւատարիմ զիւղացւոց
ասանց 100,000 դրշ.ի գրամ որ նահատակեալն փոխ
տուած է եղեր զիւղական կարօտ ժողովրդոց,
դարձեալ Խաչատուր Վանայ առաջնորդա-
քանի մէջ նստած միջոցին հաւաքեր և իւրա-
ցուցեր է, որոց ամենուն գումարը կընէ 300,000
դրուշ։

Սպա ապանելոյն մարմին դուրս հանել
տալով, ձգել կուտայ աղբիւսի վրայ և կը հր-
բամայէ որ տանին զիւղի գերեզմանատուն իբ-
ր և աշխարհական թաղն։ Սղթամարայ միա-
բան Մխիթար վարդապետ (որոյ վարք յետոյ
ալեսի դրեմ,) հոն հանդիպելով խաչահան հրէա-
ներէն աւելի կատաղութեամբ ապանելոյն մար-
մին կանարդէ ու կը հայհոյէ, և թուք արձակե-
լով նահատակելոյն մարմնոյ վերայ անզգամու-
թեան հերենակ կը լինի։ Հոն ներկայ եղող
Տաճիկներ և Քրդեր տեսնելով թէ, Խաչատուր,
Խիզանցի Յակոբ եպիսկոպոս և Մխիթար

վարդապետ առակ նշանակի կընեն հանդուցեալին մարմին, անդոնեալով կասեն. Ս.մօթ ձեզ ամօթ։ վերցուցէք ձեր կաթուղիկոսի մարմին, և պատուով թաղել տուէք։ Ս.յլաղգաց այս դուվելի խօսքէն նահատակելոյն բարեկամք և մտերիմք համարձակութիւն առնելով, կը խընդրեն որ ներս տարուի մարմին և պատուով ի շարս կաթուղիկոսաց թաղուի. Խաչատուր ակամայ կամօք կը հրամայէ ներս տանիլ, բայց պատուիրելով կը պատուիրէ որ քահանայական օծումն և թաղումն չը տան. ուստի ներսի լուսարար Յովսէփ եպիսկոպոս միայնակ անշուք կերպիւ կը թաղէ։

Յետոյ Խաչատուր Ս.ղթամարայ դրսի տուն կերթայ կը բաղմի. քանի օրէն զկնի Պետրոս կաթուղիկոս սպաննող Կուլի խան համարձակութեամբ կուգայ ներս կը մտնէ Խաչատուրի սենեակ. սա իւր կամակատար մտերիմն տեսնելով, կը հրամայէ որ սենեկի մարդիկ դուրս ելնեն. բոլոր մարդիկ կը հեռանան, մի հետաքրքիր մարդ սենեկի դրան վրայ ականջը դնելով, երկուքի միջի խօսակցութիւնք մտիկ կընէ։

Կը հարցունէ Խաչատուր թէ պատմէ տեսնամ, ի՞նչ յաջողակ եղանակաւ և ի՞նչ պատեհ միջոցի մէջ սպաննեցիր այդ անպիտան մարդ։ Կուլի խան կը պատասխանէ թէ ձեր

բանաս յանդգնուց մեզ որ շատ հնարագէտ կեր-
պիս մէկ հրացանի հարուածով ձեր թշնամին
սպաննեցինք։

Խաչատուր սատանիկ կուրախանայ, կը զովէ
նորա մտերմութեան և հաւատարմութեան և ի
նշան շնորհակալութեան և ուրախութեան Կուլ
խանի երես կը համբուրէ և կասէ թէ Ինաս
կատած չընես. ես մինչև ցմահ ղբկեզ պիտի
պաշտպանեմ. կաշխատիմ և բոլոր դրացիներս
կը վառնեմ որ բնաւ քո ոճրագործութիւն մէ-
կի մը չը յայտնուի. արդէն քո հայր վարձատ-
ուեցի, ղբկեզ ևս վարձատրութեամբ մեծի պաշ-
տօնի կարժանացնեմ. և այսպէս 3-4 ժամ
իրարու հետ ուրախանալով, խօսակցելով և խոր-
հելով, եղեռնագործն կը մեկնի, և իւր տեղ
կերթայ։

Քանի օրէն գինի Խաչատուր և Խիզանցի
Յակոբ եպիսկոպոսուն քաղաք կը տարուին, կա-
ռավարութեան առջևին մէջ կը հարցաքննուին։
Սատա Յակոբ եպիսկոպոս փոխանակ բողոքելոյ
իւր հօր սպանողաց դէմ, կսկսի նահատակեալ
կաթուղիկոսի վարուց դէմ սատանիկ և անհաւա-
տալի ամբաստանութեամբ բողոքել և զայն մա-
հու արժանի ցուցնել օտարազգեաց առաջ. ա-
ռանց ամաչելոյ և պատկառելոյ կը խօսի թէ
սպանուածն ոչ միայն Հայոց, այլ և Տաճկաց և

Քրիստոս և Հանայք աղջիկունք իւր մեղին կրէին զոհ կընէր և մեր խրատին չէր անսար. մեր օրէնք այսպիսի եկեղեցական մահուան արժանի կը դատէ, մինչ դուք ևս մահու արժանի չէք. քանզի համարիր այսպիսի մարդ մի. այն ժամանակ դենպետն կը պատասխանէ Յոհովքը եպիսկոպոսին թէ, եթէ դուք գիտէիք այսպէս լինելու դարձեալ պէտք չէր որ այսպիսի կերպիս տպանենք տայիք, այլ պէտք էր նեղս տանէիք ծուծուկ թունաւորելով ձեր խայտառակութիւն ձեր մէջ ծածկէիք. այժմ դուք բոլորովին յանցաւոր էք և տպանութեան խորհրդակից. : Սրդէն այս մասին Նարեկայ Յովսէփ վարդապետ տեղեկագրած է, ուստի հարկ չկայ երկար գրելու։

Յետ երկար և մանրամասն քննութեան, Սպասուլաճ վիաշան երկոցս կը տեղեկագրէ Բ. Դուռ, թէ Պետրոս կաթուղիկոսի ազատումն խաչատուրի և իւրայնոց թելադրութեամբ կատարուած է. ուստի կրնանաւոր է յառաջիկայ դարանն Վանայ, մինչև ազգային Վարչութիւն իրաց եղելութիւն հետզհետէ բազմաթիւ մարդկան հանրագրութիւններին տուած զեղամ զխաշատուրն Համագումարի մէջ անվաւեր կը վճռէ և կը հրատարակէ և յետոյ Պոլիս կը տանի ազգ ժանաւոր պատիժը անօրինելու. սակայն նա իր արեզակնային բաղմաթիւ վիրքերի կընդրակնելով

բաղմամբ ու մեծամեծ մարդիկ ի կոչմն իւր որ-
ապով, կը վոխարկէ ի մեղմ պաշտպանութիւն
անձին իւրոյ և գործոց. և վոխանակ պատու-
հասակոծ լինելոյ, պատուով կը բաղմի աղդային
Պատրիարքարանի մէջ, և պէտք եղած յայտնի
և գաղտնի պաշտպանութիւն կը վայելէ մինչև
յայսօր ժամանակի և մինչև երկին կամ ռէլիգիոն
հաստատելոյ կէտին կը մերձենայ, դարուս կարը-
ծելով իւաստրութեան շնորհիւ, որ վոխա-
նակ Սրբոյն աչօք հայելոյ Խաչատուրի անարդ-
արանալի գործոց վերայ, կամաւ ի՛սկզբէ կու-
րանալ չ՛ուզենալ նորա գործերը և դարուս ազ-
գային պատմութեան մէջ սև բծերով իւր արդ-
ժանապատուութիւն ազանակել ապագայ սերընդ-
գոց առջև։

Երբ ազգի մը մէջ օրէնք, իրաւունք, արդ-
արութիւն և դատաստան ճշդիւ ի գործ չդրուիր,
երբ ազգի մը մէջ անձնական շահեր ընդհանուր
ազգային շահերէն գերադաս կը համարուին,
երբ կաբինկյութեան և դիմութեան պատրուա-
կաւ մեղապարտներ կը պաշտպանուին, տարբա-
կոյս չկայ թէ Խաչատուրի նման ծանր յանցա-
ւորներ որ և իցէ եղանակաւ կարդարանան դան-
ձիւք, որոց դուռմարդոց որքանութիւն ըստ վկա-
յութեան ականատես և արժանահաւատ անձանց
յայտնի կը լինի յեսոդայ հաշուեցուցակէն,

զարս Խաչատուր եպիսկոպոս առատօրէն բաշխած է արժանաւորաց և անարժանից. որպէսզի սոքա զինքն սպանման կամակցութենէն անպարտ կացուցանեն և անիրաւ մահնայիւ պաշտպանելով զինքն, իւր ինքնընտիր կաթուղիկոսութեան մէջ հաստատեն, և ճշմարտութիւն ծածկելով երևան չը հանեն։

50,000 ղրշ. կարնոյ Դ. Եր. Յարութիւն արքեպիսկոպոսին և հետէ սպասաւորաց որ հանդուցեալ նախկին Պօղոս Պատրիարքի հրամանաւ 1864 թուականին քննիչ խրկուած էր Յ. Ղթամարը, սպանութեան պարագաներ քննել և տեղեկացողել ազգային Վարչութեան. այս քան ոսկւոյ երկար շղթայներ նորա աջ բազուկ կաշկանդեցին. ուստի ձախոնին վուրթաց սպանելոյն վարք ըստ ամբաստանութեան Խաչատուրի և Յակոբի երկարօրէն գրել և Վարչութեան խրկել։ ցուցանելով թէ ըստ իւր ապիրատութեան պատուհասած եղէր, ինչ եղանակաւ որ եղած է. իբրև թէ այնպիսի մարդ մի մեռցնելով, արդարութիւն ի գործ դրած են քան թէ անիրաւութիւն; ինչպէս իշխանք աշխարհի ծանր յանցաւորներ մահուան կը դատապարտեն. Յարութիւն և Եղեսիոս եպիսկոպոսաց տեղեկագիր այն եղրակացութիւն յառաջ բերելէն բնաւ տարբերութիւն չունի։

50,000 ղրշ հանդուցեալ Պօղոս Պատրիարքին՝ Վանայ վաճառականաց ձեռօք. յիշեալ երանելի ծերունին նաև իբրև արդարասէր դատաւոր մի բաղդքելով, Համադուսմարի մէջ դիտաշատուր եպիսկոպոս անվաւեր վճռել տուաւ, իսկ յետոյ դումարն ընդունելով, Ղանաց եպիսկոպոսական և Ընդհ. ժողովոյ մէջ զայն պաշտպանել և արդարացուցանել, բայց չը յաջողեցաւ։

40,000 ղրշ Վանայ նախկին առաջնորդն Յովնաթոս եպիսկոպոսին՝ Խաչատուրի ձեռօք. ղի Յովնաթոս Վանայ քանի երևելեաց հետ թէ Խաչատուրի կաթուղիկոսանալոյն խորհրդակից էր թէ Յարութիւն եպիսկոպոսի հետ քննիչ կարգուած լինելով զայն արդարացուցանելոյ Ղանացեր էր և թէ Վանայ առաջնորդարանի մէջ նորա ոտհապան և պաշտպանն էր այն հիւրընկալութեան միջոցին. ի վարձ իւրոյ մատրմութեան ընդունեց վերոյիշեալ դումարն, որով իւր պարտքեր վճարեց։

40,000 ղրշ. Խաչանեան Մարտիրոս պէյ իսկ դրամի անունով Խաչատուրէն ընդունեց և ի Կարին դնաց յաջողութիւն ձեռք բերելու. խեղճ պէյ կաթուածահար մեռաւ և դրամներն մէջ խաղալով այլևս տիրոջ չը վերադարձան։

30,000 ղրշ Գալըպ պէյին և Հադդի էֆէնտիին՝ Խաչատուրի և Յակոբի ձեռօք. երբ

յիշեալ պէտ յեր պաշտօնապէս ի Փշրանք դային, Պետրոսի անպարտ նպատակն արդարդայք քննե-լոյ և Խաչատուրի կամակից լինելն երևան հա-նելոյ։ Յիշեալ պրոտեստոր այլազգիք յիշեալ դուռմարքն Խրբրև վարձք հատարելով, զոնէ կիսով չափ դրեցին և բերին Վանայ կառավարութեան առեան թէ առանց Խաչատուր եպիսկոպոսի կա-տակցութեան կարելի չէ այսպիսի ոճրագործու-թիւն մի ի դլուխ հանել։ Նորա օժանդէն 3 օր դինի։

90,000 դրշ. Բախչանցի մահտեսի Պետրոսի ձեռք հասած է Խաչատուր եպիսկոպոսի կոդ-մանէ, որպէսզի իւր աշխատութեան վարձք յիշ-եալ դուռմարքէն հանելով մնացածն ալ տանի գոր-ծակատար մարդոց բաժնէ, և յորդորէ զի-րենք որ զԽաչատուրն պաշտպանեն և արդարա-ցուցնեն Ս.զգ. ժողովոց մէջ։ Յիշեալ մահտեսի Պետրոս 9 տարի անվաւեր կաթուղիկոսին, թէ ինչանորդութիւն, թէ փատաքանութիւն, թէ գործակատարութիւն և թէ պաշտպանութիւն ընելով, ի հարկէ մեծի վարձուց արժանաւոր է։

300,000 (երեք հարիւր հազար) դրշ. եղաւ ընդ ամենը։

8,000 դրշ. ալ Խաչատուրի կողմանէ Վանայ Բդեշխին կը տրուի, որպէսզի իրեն քանի մ'օր հրաման տայ Ս.ռաջնորդարանի արդելանէն ելլ-

նել Ս.Էջմիածնայ երիտասարդ եւ վերադառնալ, հրամանն ընդունելով կերթայ երեք ամիս ամենուն կը կենայ։ Ս.Էջմիածնայ միաբաններէն եւ գիւղացիներէն ոմանք կ'ստուգեն թէ այս եռամսեայ սուղ միջոցին Խաչատուր եպիսկոպոս 500,000 դրչ. դրամ հաւաքեր է խեղճ քահանաներէն, չհաներէն եւ նուէրի անունով դժողովուրդն կեղեքելէն։

90,000 դրչ. Խաչատուր եպիսկոպոս եւ բաժանորդ՝ Վանայ Տարան եւ Գալճեան Գէորգ պէյերուն տալով, Ռշտունեաց նոր գիւղի մէջ խան մը շիներ եւ այժմ ամբողջ երկու իշխանայ ձեռքն է։ Ս.Էջմիածնայ միաբանք այժմ կը վկայեն թէ՝ եթէ Խաչատուր եպիսկոպոս վերահասատուի իշխանաց պաշտպանութեամբ, խան ամբողջ անոնց կը մնայ. իսկ եթէ չը հասատուի, ի հարկէ իւր դրամներն կը պահանջէ, ելն։

398,000 (երեք հարիւր ինեսուն ութը հազար) դրչ. եղաւ ընդ ամենը։

30,000 դրչ.ի աղ արդէն Պոլիս տարաձայնութիւն մի կայ թէ այսչափ դուսմալ տրուած է քէսէտար Ցաղուլիխանին, որ առաջ Խրիստ աղգարատէր ոք Պեարոսի սպանութեան վրէժխնդիր լինելով կը բռնէր ատէպ առ Վարչութիւնն և կը խնդրէր որ փոխանակ զԽաչատուր եպիսկոպոս դատաւորեն, սակայն ընդհակառակն բարեկամ և պաշտպան դարձաւ։

1,200 ղրշ. տաւն Հատ Հարիւրեակ տակի, և մէկ թօր կէղի Խաշատուր Եպիսկոպոսի գործակատարաց ձեռօք Խասդիւղի Տ. Երեմիային կը խրկուի։ Տանող անձն տեսնելով թէ կաշառքը կը տրուի, քահանայի հոգին պիտի կորուսանէ, իւր երիտասարդ հոգին կորուսանելով 10 տակին դրպան կը դնէ, և մի թօր կէղին Տ. պապային կը յանձնէ։ Երբև մեծ գործակատարն կասկածի երթալով, նամակաւ մի կը հարցունէ Տ. պապային թէ արդեօք խրկուածն ձեռքդ հասա՞ծ է թէ ոչ, նա կը պատասխանէ արդարութեամբ թէ, միթէ կարելի՞ է ինձ մի թօր կէղիով տուա խօսիլ և մեղապարտանձ մի պաշտպանել. յայնժամ կիմանան թէ տանողը 10 տակին դրպան դրեր է։

100,000 ղրշ. այս գումարն Խաշատուրի ձեռօք այլևայլ ժանօթ և անժանօթ մարդկանց տրուած է, 1000 ով, 10000 ով, 40000 ով, որոյ անունն ինքն լաւ դիտէ. և թէ ինչ նպատակաւ տրուած է, նա ինքն քաջ դիտէ. այս գումարիս մէջ չէ լրագրոյ, խմբագրոյ և այլ զանազան փաստաբանաց տուած տակիներ որոց հաշիւն եթէ ազգային արդարադատութեան ուզէ, կրնայ խրմէն պահանջել, և բոլոր ճանրամտոն մնխտանայ հատու լինել։

329,200 (հինգ հարիւր քսան և ինն հազար երկու հարիւր) ղրշ ընդ ամենը։

Այսպէս ահա կոչը փառաբերութեամբ մոլեալ հոգիք, ոչ միայն իւրեանց հոգիք կը կորուսանեն, այլ և բազում անմեղաց հոգիք անիրաւ մահուանցիս ի կորուստ յաւիտենից կառաքեն. զի ասէ ոմն ի սրբոց. «Աստուն ոչ միայն տուողաց հոգիսն, այլ առողաց հոգիսն ևս կորուսանէ։»

Խաչատուրի փառաբերութեան զՀունէցաւ Պետրոս կաթուղիկոս, նորա փառաբերութեան զՀունէցաւ այսքան անձանց արդարութիւն. արդեօք քանի՞ քանի՞ անձինք չարչարուելով մահացան, քանի՞ քանի՞ սրտեր վշտացան, քանի՞ քանի՞ հաւատաւոր անձինք թերահաւատեցան, ո՛րչափ դրամական կորուստ վանուցն Սղթամարայ, ո՛րչափ դայթակղութիւն և խռովութիւն պարզամիտ և միամիտ ժողովրդեան մէջ, ո՛րչափ ձանձրոյթ շփոթ և վէճ ազգային կառավարութեան մէջ. այո, քան զայս առաւել եղև և կը լինի տակաւին, ոչ այլ ինչ իրաց համար, այլ միայն զի Խաչատուր եպիսկոպոս իւր հօր կենդանութեան առանց ազգի հաճութեան և ընտրութեան յանդգնեցաւ ինքզինք կաթուղիկոս ձեռնադրել տալ քանի մը տղէտ և անհեռատես եպիսկոպոսաց ձեռօք, և լինել քար դայթակղութեան և առիթ կորստեան բազմաց։ Եթէ նա զանազան հնարիւք փութայ վերադարձուցեալ

ծանր ծանր յանցանքներ իրանցն քերբ, մին
թէ ինքնասիր յանդգնութիւն վարք յանցաւ՝ նք
է օրինաւորութեան, արդարութեան և աղգա-
յին պատուութեան առաջ. քանի պատերիզ ուրուն
յանցանք Սոյ Նիկոդայոսն ծանրագոյն է, էր
վասն նա պատուեցաւ և աքսորի դատապարտ-
ուեցաւ, էր վասն այս մարդ տակաւին նոր-
պատիժ մնաց. Խոշճիս ձայնն էն գանձատուն
կը հաստատակամ ըսեր. Եթէ Պարշութիւն այս
մարդ ազգարարացուցանէ այս դարուս մէջ, իրան
դէմ ոչ միայն նահատակեալ Պետրոս կաթուղի-
կոսի ոսկորներ և ածխունք պիտի գտնէին, այլ
Նիկոդայոս եպիսկոպոսի դատապարտութիւն
իրենց դատախազ պիտի կենայ թէ այնուաշխարհ-
հոս մէջ և թէ հանդերձեալ կեանց մէջ.

Յետ Խաչատուր եպիսկոպոսին երկրորդն է
Խիզանցի Յակոբն եպիսկոպոս, որ այժմ Սղթա-
մարոյ տեղապահութեան պաշտօնն կը վարէր,
Սա երբեմն Իրանաւորութիւն տրեմի ներքև խոր
խորամանկութիւն ծածկելով, Լիմ տուրբ անու-
պատէն Սղթանոր գնաց, և կենցաղավարելով
Պուլպուլէն եպիսկոպոս ձեռնադրուեցաւ. յետ-
ոյ իւրքարտարար հայրն անդամներով Խաչատուր
եպիսկոպոսին յարեցաւ. յորոյ կամակից և
խորհրդակից եղաւ նմա. Պուլպուլէն զանձանց
առնելով, յանդգնեցաւ առանց ազգի պիտոյ

թեան՝ ձեռք Խաչատուրի վրայ դնել և օծել։
Պետրոս կաթողիկոսի բարոյապէս և անձնապէս
կրոնականներից մեռնելը դործակից դառնում էր
Խաչատուրին, Ղանայ կառավարութեան առնելի
մէջ գնահատելին մեծ գնէ ուրեմն ամենածանր
յանցանքը ամբաստանեց, զաղօրինի և զանազա-
ցին գործս Խաչատուրի պաշտպանեց, ի Ս. Պօլիս
գիմեց մի վարդապետով և բազում դրամով և
զՊօղոս պատրիարքն կաշառեց և բերան փոխեց,
Սղիտասիրայ ժողովուրդն ոչ թէ միայն գայթակղեցան
Խաչատուրէն Պետրոսի անազատ արիւն կը խլեցու-
ցին, և կը զաղտնէին այլ և այլ միջոցներով, այլ
ինքն ստախօսութեամբ նոցա բերան այլ ինն լե-
զու դնելով, զԽաչատուրն պաշտպանելնուն
հնարքը դուռ. խօսեցան առ ժողովուրդն թէ
եթէ զուք զԽաչատուրն վանեսջիք չլուսաք,
Սղի Խաչատուրի ծանր յանցանքը պատճառ
բանելով, Սղիտասիրայ կաթողիկոսութիւն խա-
զալու պիտի բանայ, Սյս կերպիւ բառական
մարդիկ իւր կողմ դրաւելով սկսան յայլևայլ տե-
ղիս զրկել նահատակելոյն վերայ անպատուելի
պատուհասութիւն դնելով, նորա մարմին դե-
բեզմանի և հոգին դժոխոց ապիսանուտ բարե-
ջից, և տակաւին ցայսօր գնոյն կը քարոզէ
ամենեցուն. տարա յիշողեալս Տեղապահութեան
պաշտօն տանալ ի վերադարձեալն յՍղիտասիրայ,

Սոնա այժմ եօթն տարի է որ Իբրև ներքին խորհրդական և հլու կամակատար Խաչատուր եպիսկոպոսի պաշտօն կը վարէր, և բաղդ. ներքին և արտաքին զօրութեամբ կաշխատի զխաչատուր զերծուցանել ի դատապարտութենէ. այս մասին զարմ և զգիշեր անդադար կը տքնի, ամէն օր նորանոր ներ յօրինելով կը տարածէ ժողովրդեան մէջ, որոց շատերու կնիք իւր քով ի պատրաստի ունելով, ուզած միջոցին հանրագրութիւն կը շինէ կը խրկէ Պ. արշութեան. քանզի շատեր վկայեցին թէ Իւրեանց կնիք Յակոբ եպիսկոպոս իր քովն է ժողովեր և այս քանի տարի է որ ուզած կերպիւ կը գործածէ. Նարեկցի Պէյ յշօն եղբմամբ հաստատեց թէ Ղ անգամ կնիք փոխագրել տուած եմ, եօթն անգամ Յակոբ եպիսկոպոս տարեր և ետ չէ դարձուցեր. այսպէս Սոկաց, Շատախու, Հայոց Զորոյ և Ալշտուեցոց գաւառի տանուտէրանց և շատ հասարակ ժողովրդոց կնիք այժմ Սղթամարայ Յակոբ եպիսկոպոսի գրպանի մէջն է. ուզէ շաբաթն եօթն անգամ հանրագրութիւն կրնայ խրկել Պ. արշութեան։

Սղթամարայ ժողովրդին այս և սորա նման պարկեշտութիւն ուշադրութեան առնելոյ է. խնդրեր ոչ կնիք գործածելոյ կերպ գիտեն, և ոչ կրնան դուշակել թէ ինչ վտանգաւոր է իրենց

կնիք այնպէս խարդախ և խորամանկ մարդկան ձեռք յանձնել տարիներով և երբէք չի հարցնել թէ խաչանց անուանքն և կնքով ինչ ապրանքներ գոյներ յառաջ կը մղուին. թէ Յաղկովք եպիսկոպոսն մը և թէ տէրտէր մարդիկ շատ անգամ դաւառաց մէջ հարիւրաւոր անձանց անունով կնիքներ փորագրել կուտան և բոլորին կը պահեն և երբ ուզեն, հանրագրութիւնք կը յօրինեն կը խրկեն ի Պոլիս զՎարչութիւն խաչանց. հրաշագործ Մկրտիչ եպիսկոպոս՝ խաչանց Պետրոս վարդապետ՝ Ս. Հ. քիւլիսայի Յովհաննէս վարդապետ, այս միջոց ի գործ դնելով շատ շինծու հանրագրութիւն խրկած են ի Պատրիարքարան, խաչանց պաշտպանութեան և անձնագովութեան համար։

Բայց և հոգևորականաց կան տակաւին շատ բռնակալք իշխանաւորք որք մինչև յարդ կեցած և շինծու կնիքներով հանրագրութիւնք պատրաստելով կը խրկեն առ Վարչութիւնն, ուստի կատաղարկեմ որ ի դաւառաց յղուած հանրագրութեանց վրայ լաւ ուշադրութիւն դարձնեն, և մէկէն ի մէկ հաւատալու և կարեւորութիւն տալու չեն. քանզի տակաւին մեր ժողովրդեան խիստ մեծագոյն մասն ոչ միայն անուսումնարկիւղներով խաչանց ստորագրութեան յարգ և պատիւ չեն ճանչնար, բաւական է որ մի աղ-

դեցութեան տէր թէ հոգեւորական և թէ աշխարհական մարդ կամենայ և հրամայէ, այլեւ ոչ կամք, ոչ կնիք և ոչ պատիւ իրենց չէ, այլ իբրև մեքենայ կը խոնարհի շարժողին և հրամայողին առաջ վանդի դեռ ազատ կամքով կամենալոյ, խօսելոյ և գործելոյ զօրութիւն և ազատութիւն չունին։

Իբրև ակամայ կ'ստիպուիմ յիշատակել տեղ թէ գաւառացի Հայերէն ոմանք տաճկերէն դպրութեան և տէրութեան օրինադր անտեղեակ գոլով, բազմիցս այնպիսի մեղպաթներ կը կնքեն որ թէ տէրութեան և թէ ազգութեան և ազգայնոց վնասակար է, այսպիսեաց մէջ դոնուածն և դուցէ մինչև ցայսօր կը գտնուին ոմանք որ յիմարաբար իւրեանց կնիք կը յանձնեն այլազգեաց կնքել մինչ որ նոցա կամքն ուղէ։ Ս.գիրքս մարդոյ վիճակի Հայերէն շատեր ոչ միայն տաճկերէն դպրութեան, այլ լեզուն խօսելոյ ևս անտեղեակ են։ Ուստի ժողովքի մէջ նստելով, երբեմն կամաւ և երբեմն ակամայ կը տխալին։ Ս.յպիսի դիպաց կը հանդիպին ուրիշ ռամիկ գաւառաց Հայեր, թէև մայրաքաղաքաց ժողովականք բոլորովին անբասիր չեն յայսպիսի վրիպանաց . . . . . .

Խաչատուրի արքանեակ Խիզանցին, արդէն ժողովրդեան ազիտութիւն և ռամկութիւն իւր

ենցուկ առնելով այն սոսկալի ոճրագործութեան ցեղ դեր խաղացին ազգի մէջ։ Ասում եմ կուսակցութիւնքն մանաւոր քաղաքներ ունին զժողովուրդն կուրութեան և տգիտութեան մէջ պահելոյ, որպէսզի միշտ իւրեանց կամաց և կրից ծառայեցնեն, և իւրեանց ազգասիրաս արարքն նոցա սեռութիւնէն ծածկելով ծածկեն։

Ազգային վարչութիւնէ սոէպ սոէպ հրահանգներ կը խրկուին առ Խրիմեանցին Ս.ղթամարայ վիճակին մէջ սահմանադրութիւն գործադրել և դպրոցաց թիւ խրկել. սակայն նա ի բէնէ սահմանադրութեան հակառակ, երբէք չի յօժարիր գործադրութեան ձեռնարկել. նա դպրոց չունի հաստատուած վիճակի մէջ, որոյ թիւն հաղորդէ կեդրոնին։ Ս.գրիլ ամսոյն մէջ միշտալ Խրիմեանցի եպիսկոպոս Վանայ առաջնորդարան տեսնելով, ստիպեցին զինքն որ ազգային հրահանգներն փութայ գործադրել, որպէսզի չ'ստիպուինք երթալ այդ վիճակ սահմանադրութիւն գործադրելոյ. սակայն ինքն յայտնեց որ առանց մեր երթալոյ ինքնին ոչ գործադրելոյ եղանակն գիտէ, և ոչ ձեռնարկելոյ միջոց. զայս ասելով հրաւիրեց զմեզ երթալոյ, և խոստացաւ վիճակի մէջ սահմանադրութիւն գործադրելոյ միջոցին մեզ ընկերանալ և ծանդակել. յուլիս ամսոյ սկիզբներն հաղիւ

հիւանդութենէ ապաքինութիւն գտնելով, մտանք Յովթամարայ վանքը. քանի վանքեր ստորագրելով, հրահանգներ տալով և հաշիւներ առնելով յուլիս ամսոյ 3 հասանք Սղթամարայ դրսի տուն ի Յախալանք։ Ստուանօր անկեղծութեամբ մեղադրեցինք յիշեալ սեղանապահն ասելով առնա՝ զի երթէ դուք Վարշութեան հրահանգնելը և հրամանները ցաղդ գործադրէիք, մեզ դժուարին գործէ մը և ճանապարհորդութենէ մը ազատ կը կացուցանէիք։

Երեք օր դրսի տուն պարապեցանք, միաբան վարդապետներէն, Զարեհան Ս. Եշանի վանահայրը Տ. Սարգիս քահանայէն, երթեւեկող գաւառացի Հայերէն և նոյնիսկ Յակոբը եպիսկոպոսէն, Հայոց հարստահարիչ բռնաւորապետներուն տեղեկութիւնք հաւաքել և ի գիր առնուլ, զորոց անունս և զգործս յետոյ ի կարգին կ՚ստորագրեմք։

Մինչդեռ մենք այսպէս երեք օր առանց վանքի բարեկարգութեան և սահմանադրութեան գործադրութեան ձեռնամուխ լինելոյ ամենայն ուրախութեամբ կը կենակցէինք, ներսէն յուլիս շրջանին յանկարծ լուր բերին Յակոբը եպիսկոպոսի թէ լուսարար Սամբրէ վարդապետ ըստ սովորութեան ծով լուացուած միջոցին քիչ մը խորն երթալով և լողալ չգիտնալով խեղ-

դուրս է, Յակոբ եպիսկոպոս մեր նոյնաժ սեն-
եակ մոնելով, հրամայեց որ Յովսէփ եպիսկո-
պոս, Յակոբ, Ղազար, Խորէն և Պօղոս վար-
դապետք դուրս ելնեն, զի զաղանի բան ու-
նիմ խօսելոյ Երեմիա եպիսկոպոսին. Նոքա սեն-
եակէն մեկնելէն զկնի մերձեցաւ յունէն իմ
և ասէ. Մամբրէ վարդապետ ծով լուացած
մէջոյին խոյն երթալով և արդէն լոգալ չ'դիտ-
նալուն համար խեղդուելէ. Ի՞նչպէս ընենք։
Պատասխանեցի թէ Պէտք է անմիջապէս կատա-
վարութեան իմաց տալով քննիչ խնդրէք, լաւ-
մի քննելէն զկնի թաղէք։ Եա ընդդի-
մացաւ քննիչ բերելոյ, պատճառելով թէ ծախ-
քի կարօտութիւն կունենայ և դրամ կերթայ.
ուստի ասէ. Ես կը հրամայեմ որ երթան ծածուկ
թաղեն, յետոյ կը համբաւեն թէ իւր մահ-
ուամբ մեռաւ։ Այսպէս խօսելոյն համար կըշ-
տամբեցի զինքն, ասելով թէ Դուք արդէն ձեր
անվաւեր կաթուղիկոսով ծանր ամբաստանու-
թեան ներքև էք Պիւլպիւլի սպանման մասին.
կատաղարութիւն արդէն ձեր վրայ կասկած
ունի. Ծածուկ թաղելոյն պէս՝ ձեր թշնամիք
գործին ուրիշ կերպարանք կուտան և կսկսին
զձեզ իբրև մարդասպան ամբաստանել։ Եպիս-
կոպոս ակամայից բռնադատեալ նամակ մի
գրեց խանի մէջ նստող մէկ երկու հայ վաճա-

ուականայ թէ այսպիսի դիպուած մը պատահած է, ներս դայմագամին ծածուկ իմաց տուէք։ բայց թող չ՚տաք քննիչ խրկելոյ և մեզ ծախուց դուռ բանալոյ։ Երբ դրած նամակ մեզ կարդայ, կրկին ազդարարեցինք իրեն որ այդ կերպ դրուածք աւելի կասկած կը յարուցանէ ձեր վրայ։ (այսինքն իմացնելն և մարդ խրկելոյ արգելք տալն)։ Եւ ասիպեցի զինքն որ անպատճառ վարդապետ մի երթայ բերանացի դիպուածն դայմագամին պատմէ, և քննիչ մը առնելով հետ բերէ։ Ապա զինչ, կոչեց ՂԱզար վարդապետ, պատուիրեց որ երթայ դայմագամին դործը պատմէ, սակայն քննիչ չ՚բերէ. դարձեալ մենք վարդապետին համոզեցինք որ անպատճառ մի մարդ բերէ քննելոյ. դնաց ՂԱզար վարդապետն և յուլիս 4 երեկոյին ժամ 10ին դայմագամի ատենադպիր իբրև քննիչ հետ բերաւ։

Տեղապահ եհարց ՂԱզար վարդապետ թէ ո՞չ ապաքէն ասացի քեզ մարդ չ՚բերել. ընդէ՞ր բերիր. նա պատասխանեց թէ ձեր հրամանին համեմատ առաջարկեցի մարդ չ՚խրկելոյ, սակայն դայմագամը պնդեցթէ տէրութեան օրէնքը կը պահանջէ այսպիսի դիպուածական մահուամբ մեռածներ անպատճառ քննել, և կեդրոնական կառավարութեան տեղեկութիւն տալ։

Երեկոյ Յակոբ եպիսկոպոս, քննիչ էֆէնտի և միաբան վարդապետք պատրաստեցան նստել ներս. Եպիսկոպոս և միաբանք ի մի բերան անդերձ քննիչ էֆէնտիով խնդրեցին մեզմէ որ մեք ևս իբրև քննիչ երթաւք ի ներս, սակայն քաներց հրաժարեցանք ներս երթալ. բայց յետոյ Եոցա խիստ թախանձանքէն ստիպեալ մեք ալ գիշանք, վասն երկու պատճառի. Ա. որ ի ծնընդեանէ Ա.ղթամարայ տաճար տեսած չէի, տեսնել և ստորագրել. Բ. որ Յակոբ եպիսկոպոս այն Մէջոցին սաստիկ թշնամի դուլ Ա.թառնանցի Մէթթար վարդապետի, կուզէր զայն ստրատուորել, թէ Մամբրէն ոգա անզգամութեան և բամբասանաց չդիմանալով զինքն դուրն մէջ խեղդեր է։ Երբ այն անհաստատ և անիրաւ խօսք դրսի տան մէջ յիշեալ եպիսկոպոսէն լսեցի, սաստիկ յանդիմանեցի զինքն, թէ դու յայտնապէս Ա.ստուծոյ դէմ, խղճի դէմ և մարդկութեան դէմ կը մեղանչես, երբ բազմաթիւ վկայներէ լսեցիր, և ստուգապէս գիտես թէ Մամբրէն ուրախ զուարթ ըստ բժշկաց պատուիրելոյն և ըստ սովորութեան ծոցը լուացուելոյ երթալով պատահաբար խեղդուեր է... Յուլիս 4 դիշեր ժամ 6ին յաջողակ հոգմ գտնալով ներս մտանք, և հասած միջոցէն մինչև առաւօտ քննիչը օրնաւ թէ հրապարակաւ և թէ

տանձին տանձին մէն մի միաբաններէն հաղ-
ցաքննութիւն առնել. ամենք միատեսակ և միա-
բերան վկայեցին թէ, նա հիւանդութիւն ու-
ներնալով բժիշկներէն խորհուրդ ընդունած էր
ամեն օր վան առողջութեան ծովու մէջ լուացո-
ւիլ. արդէն 15 օր առաջէն սկսեալ ամեն օրաո-
վորաբար կերթար կղզին հիւսիսային կողմ,
ջրի հորի քով ծովու մէջ լուացուելու, որ ամե-
նէն ապահով լուացուելոյ տեղն է. զի անկէ
աւելի ծով մտնալու ապահով տեղ բնաւ չկայ
կղզիի մէջ. այն խեղդուելու օրն, որ է յուլիս
Դ, կերթայ հացի փուռ, հացեփոշին կը խօսի
թէ երթամք ի միասին լողանամք. նա կը պա-
տասխանէ թէ արդէն հաց եփելն չէ աւարտեր.
ուստի ինք կերթայ ծովուն եզերքը, զգեստներ
կը հանէ, ծով կը մտնայ. լուացուելու տեղ խիստ
խոր և գահավէժ և լայրծուն քարերով լիք ջի-
նելով, խեղճի ոտք կը սահի դէպ ի խորն. և
կընկղմի. ջրի երես կելնէ և կաշխատի դէպ ի
եզերք գալ ու ազատիլ, բայց լողչդիտնալուն
համար կրկին կ'ընկղմի տակ և կը սուզանի։

Մամբրէ վարդապետի խորթ եղբայրն նոյն
ծովեզերք դիտող բարձրաւանդակ քարի մը
վրայ նստելով կը կարդայ եղերը. կը տեսնայ
եղբօրն ծովեզրն ինչնել, կը տեսնայ նորա զգեստ
հանելն, և ջուր մտնելն; և կը տեսնայ նորա

առաջին ընկղմիլն, վերբ եկնելն և ազատութեան համար աշխատիլն, բայց խեղճ իբրև ապուշ կը կարծէ թէ վարդապետ չրի մէջ ուրախացած ձեռքերն ապտաքոյ կարդի կը շարժէ. ուստի բնաւ փոյթ չըներ օգնութեան դիմել. երբ կրկին դոգի վրայէն աչք այն կողմը կը դարձունէ, և եղբայր ոչ չրի մէջ և ոչ եղերքը կը տեսնայ, խակոյն կը փութայ լուացուելոյ տեղն, և կը տեսնայ եղբօր մարմին չրի ներքև, սատանիկ կսկիծէն կը մոռանայ իր քաջ լողորդութիւնը, որով անմիջապէս կրնար ազատել զեղբայրն. սակայն հոն սակաւ ինչ լալով և տնտրնալով, ապա իբր ուշաբերեալ կը դիմէ դէպ ի վանք, եղբօր անցքն. իմացնելոյ Մխիթար վարդապետն իմանալուն պէս քանի մարդիկ ելանէ կերթայ և սատանիկ հայհոյանօք հաղիւ կը յաջողի Մամբրէէ եղբայր և ուրիշ լողորդ մի չրի մէջ մտցուցեալ և մարմին դուրս հանել. հանելէն զկնի կը բերեն մերձակայ ծառի ճիւղէն կը կախեն ոտքէն գլխիվայր, ոտքին բանական ծեծ կուտան և կաշխատին, արդէն քառորդ ժամանակ վրայ անցնելով ապարդիւն կը լինի Մխիթար վարդապետի հնարք և աշխատութիւն, եթէ այս տեսակ կախեն և ծեծեն հնարք ազատութեան կրնայ ըստ իլ երբէք;

Քանիչ էպէնտի իւր գործ աւարտելէն վերջ, երիցս հարցի իրմէն ծանուցանել հրապարակաւ իւր քննութեան արդիւնք և ապա երթալ. նա պատասխանեց թէ Ես մանրամասնաբար քննեցի թէ Մասիրէի եղբօրմէն և թէ բոլոր միաբաններէն, որ նա ըստ բժշկաց հրահանգին տակաւին ծոմ ընդունելոյ երթալով հանգիստ է. մեք ինչպէս վերը պատմեցինք, նա նոյն պատմութիւն արդէն բոլորէն լսելով կրկնեց։ Յակոբ եպիսկոպոս դրամի մասին մեր կարծիքն առնելով, Մասիրէին դրամէն մէկ ոսկի առաքննիչին, որ Յուլիս Յին մեկնեցաւ կղզիէն։

Ապա միաձանք կարծիք յայտնեցին թէ պէ՞տք է քահանայութաղ տալ թէ ոչ. իսկոյն Յակոբ եպիսկոպոս պատասխանեց թէ ըստ որում նա պատահաբար ի ծոմն ընկղմած լինելով երբէք յուսահատութեամբ զին.քն ծոմ ձգած չէ, հետեւաբար քահանայութաղի արժանի է. դնացէք պատուով քահանայութաղ կատարելով օծեցէք, և ի հանդիսաւ գերեզմանի ամփոփեցէք։ Ըստ հրամանի Տեղապահին թաղման հանդէսը կատարուեցաւ շքեղութեամբ. տակաւին միաբաններէն ոմանք յայտնեցին խնդրանցին թէ՝ դուք որ կը հրամայէք ի ծոմ ընկղմելոյն քահանայութաղով ամփոփել ի չիրիսմա Ս. հարց, ապա ընդէ՞ր միաբաններով ընդ խա-

ջատուր եպիսկոպոսի կը հրամայէիք ձեր ձեռ-
նադրող Պիւլպիւլ Պետրոս կաթուղիկոսի մեր-
մին քահանայութեան երբէք արժանի չլինելով
ի գերեզմանս աշխարհականաց թաղել, մինչդեռ
նա արեան մէջ նահատակեալ էր և կաթուղի-
կոս գոլով հայրապետի աթոռս կը բաղմէր, ընդ-
գէր նորա մարմին առանց ջրհեղ հանդիսի,
առանց պատարագի և առանց օրինաւոր քահա-
նայութեան ամփոփել տուք. առ այս իրաւացի
առարկութիւն ամօթահար լռութենէն ի զատ
Տեղապահ բնաւ պատասխան չտուաւ, պատա-
խանողաց։

Պատմութեան ճշմարտութիւն կատիպէ զիս
յայտնել աշխարհի թէ միաբանութեան կէս ար-
տաքոյ կարդի և չափէն աւելի ուրախացեր էին
Մամբրէ վարդապետի մահուան վրայ, և չկըր-
նալով իւրեանց ուրախութիւն ծածկել, կաղաղ-
ակէին. Ո՛վ Աստուծոյ անքննելի և արդար դա-
տաստանին, ի՞նչպէս արդար և արդար դատաստա-
նաւ դատեցիր սոյն գոռող ամբարտաւան, որ ոչ
յԱստուծոյ կ՚երկնչէր և ոչ ի մարդկանէ կամենայր,
որ շատերու քար դայթակղութեան եղած էր
և շատերու բարոյական մահուան իսկ պատճառ։
Մեք քանիցս սատակեցինք և յանդիմանեցինք
զուրախացողս, որ առանց ուրախութեան իրրև
կարելւոյ եղբայր նորա հոգւոյ վրկութեան հա-

մար ալօթեն. բայց նոքա կը յաւելուին թէ, Սրբազան, դուք ոչ պնա կը ճանաչէք և ոչ նորա անբարի գործքեր գիտէք. ուստի չէք կարող մեր սիրտ թափուցանել և Աստուծոյ յաստուկ հրաշագործութիւնն չպատմել։

Յովսէփի եպիսկոպոսի բարեկամք թէ է դրսի տուն և թէ Աղթամարայ ներս, նորա ազատութեան վրայ զարմացած՝ Աստուածային հրաշք կանուանէին ասելով. Խիստ բարեբախտ էիր որ Երեմիա եպիսկոպոսի հետ դրսի տուն դոնուեցար Սամբրէի խեղդուած միջոցին. վասնզի Յակոբ եպիսկոպոս քեզ ոխերիմ թշնամի դողով, անշուշտ պիտի հրատարակէր և սուտ վկայներով հաստատէր, թէ Յովսէփի եպիսկոպոսի ձեռքէն լուսարարութիւն յանիշատակելոյն համար ձեռքով չրի մէջ խեղդեր. զայս և Յովսէփի եպիսկոպոս ասէր, զի երթէ մեք նախանամութեան անօրինաբար դուրս չ'լինէինք, և Երեմիա սրբազան հոն ներկայ չ'լինէր, անտարակոյս այդ անաստուած և անխիղճ մարդ զմեզ զրպարտելով կը զրպարտէր։ Գոհութիւն արարչին, որ զմեզ ազատեց նորա խարդախ խորամանկութենէն, որ սովոր է ամեն օր անմեղ մարդիկ զրպարտել։

Յակոբ եպիսկոպոս և իւրայինք միայն սրտում էին և կը մտածէին անմեղ մի զրպար-

տեալ, և չէին գիտեր թէ զո՞նք զրպարտեն. զի Մամբրէն իւրեան կամակատար գործիքն էր Աղթամարայ ներս, սիրելի և մտերիմ Խաչատուրին և Յակովբին. ներքսի գործոց և լուսարարութեան մէջ թէ ազդեցութիւն կար և թէ հին և նոր շատ գաղտնիքներ կար. նորա մահուամբ հետզհետէ գաղտնիքներ հրապարակ կելնէին, և միաբանութեան մէջ մէկ չկար Դորա հաւասար մեքենայութեանց մի ծայր բռնող, և խարդախ խորհրդոյ Յակովբի և Խաչատուրի խորհրդապահ. ուստի Յակովբ յանձն իւր կը խռովէր և կը տարակուսէր մէկ մի լուսարար կարգելնորա տեղն, եկեղեցւոյ քանալին և դանձն յանձնել։

Մինչդեռ մեք ընդ Յակովբ եպիսկոպոսին Յովսէփ եպիսկոպոսն սենեակ թէյ կը խմէինք, ամբողջ միաբան վարդապետք ներս մտնելով նոր լուսարարի ընտրութիւն առաջարկեցին և խօսքն առ մեզ ուղղելով խօսեցան թէ. Մեք կը տեսնամք որ դուք քանի օրէ այս վանքս գրաւելով, և վանքիս ներքին և արտաքին անբարեկարգութիւն տեսնելով, մեզ միայն լոկ խօսքով կառաջարկէք թէ դուք ղձեղ և ղձեր վանքն ձեր ձեռքով պէտք է որ բարեկարգէք. դուք ոչ միայն պաշտօնի և եպիսկոպոսութեան կողմանէ պարտիք վանքս բարեկարգութեան

մէջ դնել, այլ և իբրև մեզ հաւատարիկից և եղբայրակից ոգէարք է որ ո՛չ միայն ցաւի՛ք և վշտանաք մեր վիճակի և կացութեան վրայ, այլ գործնական հայրենասիրութեամբ ձեռնարկէք մեր արբաջան հարց հետ Սղթաւարայ տուն և վիճակ բարեկարգել։ Խիստ իրաւացի էր այն առաջարկութիւն և տրտունջ առ մեզ ուղղեալ։ ուստի ստիպեցինք զքեզ որ միտքանութիւն որ անմիջապէս լուսարարի ընտրութիւն կատարուի, որ բարեկարգութեան առաջին քայլ կը համարուի։

Որովհետև երկու կուսակցութեան մեծագոյն մասի փատահութիւն Կարկառցի Յակոբը վարդապետի վրայ էր. ուստի նախ առաջարկուեցաւ անոր լուսարարի պաշտօն. նա անբաւականութիւն խոստովանելով չընդունեց, թէև բոլոր միտքանք սաստիկ կոտրեցին. և կը յորդորէին ընդունել։ Սակայն Ղազար վարդապետն, ապա Սխիթար վարդապետն, ապա Կարդապետ Փշալանցի Յակոբ վարդապետն, ապա Խորէն և Պօղոս վարդապետքն, և ապա Յովսէփ Եպիսկոպոսն ընդունել տալ լուսարարութիւնն, զոր երկար միջոց կատարելով դուխութեան արժանացեալ էր։ Խորէն վարդապետ դիտողութիւն յայտնեց թէ մեք երկուքս այդ պաշտօն վարելով մեր չչնչան լրացուցեր ենք։ ուստի նա քա-

խոպան հրաժարեցաւ և տեսնելով միարանայ թէ Փշավանցի Յակոբ վարդապետ պարզ ինչ յօժարութիւն կը ցուցնէ, ամենքն ի միասին սկսան զայն յորդորել. ուստի ամենեցուն հաճութեամբ եկեղեցոյ քանային ազահանիշոյ մի յանձնուեցաւ նմա, յիշեալ վարդապետին թէ և Յակոբ եպիսկոպոս հաճութիւն տուաւ, բայց ի ներքուստ տհաճ էր նորա այնպիսի պաշտօնի հանիլ. քանզի վատահ չէր նորա առ ինքն մտերմութեան վրայ, զի նա ի զուր ի քանտ և յաքսոր տատնած դրով կը խիթար ի նմանէ։

Յետ այսորիկ իբրև երկրորդ բարեկարգութիւն առաջարկեցին. Վարշութեան առ Տեզապահն ուղղեալ հրահանգն գործադրելով Տնօրէն ժողով կազմել։ Այն առաջարկութեան վրայ միաբանք խորհելոյ միջոց խնդրելով, բայց ի Տեզապահէն բողոքեցան Յովսէփ եպիսկոպոսն ոմանք էն ուրիշ սենեակ պացին, իւրեանց ներքին բարեկարգութեան վրայ խորհելոյն։ Մխիթար վարդապետ այսոգաստաւոր խրկելով ծանուցին թէ մեք շրջանով ներս մնալ և վարդվարել կը խնդրեմք. քանզի վանքն առաջին բարեկարգութիւն խանդարուելով վարդապետներքն ալ ոք յօժարութիւն չունի ներս մնալ և կարգ վարել, մինչդեռ Տեզապահ և ուրիշներ քարտնակ գուրս նստելով զանազան խորհրդներ,

բով կը պարարտանան, իսկ ոմանք ներս մնալով անկերակուր և անմխիթար սրտամաշ կը լինին։ Պատասխանեցինք թէ. Ամոյդ նորակերպ քարեկարգութիւն ձեր Տեղապահին և ձեզ կը պատկանի մասնաւորապէս. եթէ նա և դուք հաճութիւն ունիք, մեք արդեւլիշ խնդրոյ չեմք լինիր։ Պատդամաբեր Մխիթար վարդապետ իւրեանց առաջարկութիւն Տեղապահին հաճութեամբ ընդունելով, միաբանաց հաղորդեց և ընդ նոսա ինքներքս եկաւ բաղմեցաւ։

Տեղապահին և միաբանաց որոշումն արձանագրուելէն յետոյ, միաբանք ևս խնդրեցին Տնօրէն ժողովի կազմութեան ձեռնարկել, ըստ Վանական խորհրդոյ հրահանգին, ընդհանուր միաբանից քուէով։ Նախ հինգ հոգի ընտրութեան, որոց մէջէն Կարկառցի Յակոբը վարդապետ դրով իւր հրաժարական տուաւ, իսկ խորէն վարդապետ վան յայտնի յանցանաց ինքն արդէն վերջար չունենալով, տակաւին ապաշխարանաց շրջանի մէջ գտնուելով ընտրելոց ցանկէն հանուեցաւ։

Իսկ Յովսէփ եպիսկոպոսի, Ղաղար և Մխիթար վարդապետաց ընտրութիւն հանդերձ տեղեկագրով խրկուեցաւ առ աղգային Վարչութիւնն։

Տեղապահ Սրբազան, Տնօրէն ժողովոյ ան-

գամք, ընդ նոսին գրեթէ ամբողջ միապանք հեռն առնելով, նախ ծուխակուր Մամբրէ լուսարար վարդապետն սենեակ բացաւ, եկեղեցւոյ վերաբերեալ մոմ, շուշփայ, խունկ եւն, նոր լուսարարին յանձնեց. իսկ նորա կահ և կարասիք ում կամեցաւ, անոնց բաշխեց, և սենեակ Ղազար վարդապետն յանձնեց, ուր մերս սենեակ շունէր։

7523 - 7528

0003769
0003770
0003771
0003772
0003703
0003700

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0003769

ՀՀ Ազգային գրադարան
NL0003770

ՀՀ Ազգային գրադարան
NL0003771

ՀՀ Ազգային գրադարան
NL0003772

ՀՀ Ազգային գրադարան
NL0003703

ՀՀ Ազգային գրադարան
NL0003700